

«2023թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 14-ՐԴ ՇՐՋԱՆԻ

II ՓՈՒԼ

ԽՆԴԻՐ

Կազմակերպությունը զբաղվում է հանքային ջրերի արտադրությամբ և մանրամասնաձև առք ու վաճառքով: Հաշվետու ժամանակաշրջանում կատարել է հետևյալ գործարքները.

1. Վրաստանից ներմուծել է հումք 10 000 000 ՀՀ դրամ մաքսային արժեքով, սակայն ոչ բոլոր ապրանքներն են հարկվել ԱԱՀ-ով: ԱԱՀ-ով հարկվել է 3 000 000 դրամ մաքսային արժեքով ապրանքները, որոնց մաքսատուրքը եղել է 5 տոկոս,
2. ԵՏՄ-ից ներմուծվել են ապրանքներ 6 000 000 ՀՀ դրամ արժողությամբ,
3. ՀՀ տարածքում կատարել է մանրամասն վաճառք 12 000 000 ՀՀ դրամ արժողությամբ (Ներառյալ՝ ԱԱՀ),
4. Մեծածախ եղանակով կատարել է իրացում 14 000 000 ՀՀ դրամ արժողությամբ (առանց՝ ԱԱՀ):

Լրացուցիչ տեղեկություն՝

Առաջին և երկրորդ կետերում նշված ներմուծումները կատարվել են հունիս ամսին, որոնց ներմուծման ԱԱՀ վճարվել է 14.07.2023թ. –ին,

4-րդ կետով նշված վաճառքի 4 000 000 ՀՀ դրամ ապրանքները իրացվել են ԱԱՀ-ից ազատված գործարքի շրջանակներում: Տվյալ ապրանքները ամբողջությամբ գնված են եղել շրջանառության հարկ վճարող տնտեսվարողից, որը ներկայացրել է հաշվարկային փաստաթղթեր:

Հաշվետու ամիսը հունիս ամիսն է:

Որոշել Հունիս ամսվա վճարման (հաշվանցման) ենթակա ԱԱՀ-ն:

Պատասխան

1. ԱԱՀ դտ 630 000 պակասեցում 630 000
2. ԱԱՀ դտ 1 200 000
3. ԱԱՀ կտ 2 000 000
4. ԱԱՀ կտ 2 000 000

Վճարման ենթակա ԱԱՀ 2 800 000